

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՑԸ Կ ՀԱՅԵՐԷՆ ՉԵՌԱԳՐԱՑ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԻԻԹԱՐԵԱՆ

Կազմեց Հ. ՅԱԿՈՎԲՈՍ ՏԱՇԵԱՆ, Վիեննա, 1895 թ. Լոյս տե-
աաւ 1896 թ. Գինն է 75 փր. = 29 ր., ճամբու ծախքով
փր. 6 կամ 2 ր. 30 կ. աւելի:



Վիեննայի Մխիթարեանները Հ. Արսէն Ալտընեանի քննական քե-
րականութեան հրատարակութիւ-
նից լիտով երկրորդ մեծ գործն են
հրատարակում, որ արժանի իրենց
անուան, Հալոց գրականութեան
համար մնալուն աշխատութիւններ
են համարուելու: Նրանք 1891
թուից սկսեցին արժարծել հայե-
րէն ձեռագրերի ուսումնասիրու-
թեան անհրաժեշտութիւնը ման-
րաման և որոշ ծրագրով կազմած
ցուցակագրութիւններով: Յուցա-
կագրութեան ծրագիրն ալս է. Նը-
կարագրել ձեռագրի արտաքին և
ձերքին տեսքը՝ կազմ, նիւթ, գը-
րութիւն. քաղել մատենագրական
տեղեկութիւնները՝ զրիչ, տեղ, ժա-
մանակ, զրիչ տողոյ, և տալ բովան-
գակութիւնը մանրամասն՝ ալս է
իւրաքանչիւր ձեռագրում պարու-
նակուած նիւթերը վիշատակել ա-

ռաջ բերելով նիւթի վերնագիրը
ամբողջապէս, սկսուածքը, վերջա-
ւորութիւնը և եթէ դեռ չէ տպա-
գրուած, արտատպել մատենագի-
տական հետաքրքրութիւն ունեցող
հատուածներ և վիշատակարանները
ամբողջութեամբ: Եւրոպացիների
համար ցուցակի համառօտութիւնը
գրուում է որևէ եւրոպական լե-
զուով: Միաբանութեան հրաւերին
շատերը ձայնակցեցին և պատ-
րաստականութիւն չալանեցին ա-
մեն կերպ օգնել գործին:

Հայերէն ձեռագրերի թիւը շատ
մեծ է. չհաշուած մեր լալանի վան-
քերի՝ Էլմիրանի, Սևանի, Երուսա-
ղէմի, Վիեննայի, Վիեննայի մեծ
ժողովածուները, բոլոր եւրոպա-
կան մալրա-քաղաքների մատենա-
դարանները ունեն շատ կամ քիչ
թուով հայերէն ձեռագրեր. քիչ
չեն զանազան երկրորդական վան-

քերի, դպրոցների, գիւղական և քաղաքի եկեղեցիների և մինչև անդամ մասնաւոր անձանց մօտ դտնուած օրինակները. հալկական քաղաքակրթութեան, պատմական և գրական կեանքի հետաքրքիր կենդանի ժամանակակից վկաներ են դրանք. ուսումնասիրել, ծանօթանալ նրանց հետ կը նշանակէ մի քաջ առաջ անել մեր անցեալի անլուրտութեան մէջ, ճանաչել մեր պատմական կեանքի մի շարք չը բացատրուած երևութիւններ.

Իրև օրինակներ Լ. Տաշեանը 1891 թ. հրատարակեց Վիեննայի կալսերական մատենադարանի 30 ձեռագրերի ցուցակը, իսկ Լ. Գալէմքարեանը Միւնխենի 22 ձեռագրերինը, Բացի այդ նման ծրագրով ապուած են՝ Կեսարիայի երկու վանքերի (Պալեան Տրդատ վարդապետի), Ներսիսեան դպրոցի (Կանալեանց), իսկ Պետերբուրգինը (Պրոֆ. Մառ.) և Հոռոմինը (Միսկճեան) դեռ կիսատ են, ապագրութեան պատրաստ են Պարիզի ազգային մատենադարանի (Մեսրոպ վարդապետ) և Բերլինի (Տաշեան) ցուցակները. վերջինի գերմաներէնը տպուած է 1888 թ. (Քարամեան), Ալժմ մեր առաջ դրուած է Վիեննայի Միսիթարեան մատենադարանի 573 օրինակի մալր ցուցակը, որը իւր տեսակով վերոլինել ծրագրի կատարելատիպն է.

Նախ քան նրա մասին գրելը, կուզէի մի քանի խօսք ասել նրա կազմողի, Լ. Տաշեանի մասին: Նա պատկանում է եւրոպական ակադեմիքական և համալսարանական

ալն գիտնականների կարգին, որոնք ապրում են միմիայն իրենց սիրած և ընտրած մասնագիտութեան համար. ալք տիպը մեր մէջ հազուագիւտ է, որովհետև պալմանները անհամապատասխան են. մեր մէջ դրանց նմանների միակ տեղը կարող են լինել վանքերը: Լ. Տաշեանը դեռ շատ երիտասարդ է, 30 տարին հաղիւ բոլորած լինի, արտաքուստ փոքր է և վտիտ, կենդանի աչքերով, նիրհար դժգոյն դէմքով, ժպտերես և արագաշարժ: Զարմանալի է նրա լիջողութիւնը և մասնագիտութեան մէջ ունեցած պաշարը. գիտէ եւրոպական լատինի լեզուներ, հին լեզուները՝ լուսնարէն, լատիներէն, գիտէ պարսկերէն, քրդերէն, ասորերէն, որոնց մեծ մասը սովորել է առանց ուրիշի օգնութեան և շատ կարճ ժամանակում: Երբ նրա համեստ վանական խուցը մտնենք, որի ամբողջ կահկարասիքը կազմում են մի մաճակալ, գրքերի երկու պահարան, երեք աթոռ և մի գրասեղան, նրան միշտ իւր սիրած գրքերի հետ կը գտնէք. նա կամ կարդում է կամ գրում, կարդացածներից քաղուածներ անում, իւր աշխատութիւնները սրբագրում: Իւր բարի քաղցր բնաւորութեամբ իւր գնացողին ընդունում է, բայց նկատում էք, որ նա մեծ զոհողութիւն է անում ընդհատելով պարապմունքը. շարունակ գանգատում է զլիտացաւի և ախորժակի վատութեան մասին, պատճառը հեռացնել հնչտ է, միայն Տաշեանի համար դժուար իրագործելի. ժամանակ կորցնել

Թողնել աշխատանքը, ալդ նրա համար չէ: Միաբանութիւնը սիրուած է նրան, հպարտանում նրանով, ամեն տեսակ ղիւրութիւններ տալիս պարտապիտու Հանդէս Ամսօրեայի հրատարակելուց ի վեր նրա գլխաւոր աշխատակիցն է, որը իրան համար մի տեսակ զըպրոց է. նա իւր առաջի և լաւ աշխատութիւնները աշտեղ է հրատարակել մաս-մաս և ապա արտատապել առանձին գրքովներով:

Ներկայ աշխատութիւնը անագին գործ է, բաղկացած Հանդէս Ամսօրեայի կամ ալժմուպ Արարատի (քառածալ տպագրական թերթ) գիրքով. XVIII+278+149 +1164=1524 էջից և 7 լուսատիպ և վիմատիպ տախտակներից՝ տպագրուած երկսիւն մանր տառերով: Նա աւելի է քան թէ Հ. Ալիշանի Արարատը, Սիսուանը և Սիսականը ի միասին առած, Թէև աշխատութեան ժամանակամիջոցը 5 տարի է ասուած, բայց մինք գիտենք, որ Տաշեանը միանգ վերջին 2 տարին էր ամբողջովին ներան նուիրել. միւս ժամանակը աշխատում էր վեշեալ գործերի վրայ, որոնց շնորհիւ պատուաւոր տեղ ունի հալ մատենագրագէտների փառաթիւ անձանց շարքում:

Յուցակը բաղկացած է երկու գերմաներէն և հայերէն մասերից, առաջինը երկրորդի համառօտութիւնն է. ցուցակագրուած են 573 համար. վերջին երկու համարը և թիւ 456 ամբողջ ձեռագրեր չեն, ալ կազմերի կողքից պոկած մազաղաթեալ պահպանակներ: Յու-

ցակը ունի գեղեցիկ լառաջարան և մի քանի ցանկեր: Յառաջարանից (էջ Ա—ԺԶ) իմանում ենք, որ Վիեննայի Մխիթարեան ժողովածուն կազմուել է մաս-մաս 1773 թ. սկիզբը Տրիեստում, որտեղ առաջին անգամ հաստատուել են Վիեննայի Մխիթարեանները բաժանուելով Վենետիկի մալր միաբանութիւնից, ալնտեղ ունեցել են 60—67 օրինակ՝ ժողովածուի ամենալաւ ձեռագրերը և ապա շարունակուել է Վիեննաում 1810 թ. Տրիեստից տեղափոխուելուց իտոյ: Չեռագրերի մեծ մասը նուէրներ է. համառօտ կերպով ցուցակագրուել են մի քանի անգամ և ըստ ալմ էլ Հ. Տաշեանը ձեռագրերի հաւաքման մի քանի շիջաններ է ընդունում: Հայերէն ամենահին ձեռագրերը Թորդ դարուց առաջ չեն անցնում, թէև ալ տարուալ թուականով լայտնի միան մի օրինակ ունինք՝ Լազարեան ճեմարանի 81Զ—887 թ. գրած Աւետարանն է, իսկ ուրիշները միան ենթագրութեամբ են Թորդ դարուց առաջ տարուել. ալդպէս է օրինակ Վիեննայի կրկնագիր *) Աղաթանգեղոսը, որ ցուցակում նշանակուած

*) Կրկնագիր—palimpsest կոչում են այն ձեռագրերը, որոնց մի անգամ գրուածը քերուել, շնջուել է և նորից գրուել: Քիմիական բաղադրութեան միջոցով կարողանում են որոշ չափով պարզել սկզբնական գրուածը և կարգալ Հայերէն ամենալայտնի մեծ կրկնագիրը Աղաթանգեղոսի օրինակն է. բաւական մեծ է և իմ նկատած Պարիզի մի ձեռագիրը, որ դժբախտաբար ժամանակ չունեցալ ուսումնասիրելու:

է Թ—Ժ դար, մինչդեռ աւելի ուզից կը լինէր Նշանակել Ժ—ԺԱ դար:

Հ. Տաշեանը ձեռագրերը ըստ հնութեան աւարդս է բխել. Թ (աւելի ուղիղ Ժ)—ԺՎ դար *) իշատակարաններն տարեթուերով որոշ են 12 օրինակ, ԺՎ դար—24 օրինակ, ԺԱ դար—18 օրինակ, ԺԶ դար—30 օրինակ, ԺԷ դար—110 օրինակ և ԺԸ դար—90 օրինակ. սրանց հետ պէտք է աւելացնել նախագրաբար որոշուածները. Աթէ ձեռագրերն շատութիւնը ալս կամ ալն տարում՝ ակնլաւոնի ապացոյց պիտի ծառայէ գրականութեան դարգացման և վերակենդանութեան, հաստատ է, որ ԺՎ—ԺԷ դարը՝ Կիլիկիան շրջան և ԺԷ—ԺԸ դարը՝ եւրոպական, լատիպաէս իտալական ազդեցութեան շրջանը, իրենց բեղմնաւորութեամբ աչքին ընկնում. Վիեննայի ձեռագրերի համեմատական մեծ թիւը ալց դարերից է. նոյնը կարող էմ ասել Էջմիածնի և Պարիզի ձեռագրերի մասին, որոնց հետ ի մօտը ծանօթ եմ:

Նիւթի կողմից ժողովածուի միայն 31 օրինակն են մագաղաթից, մնացածները թղթից բոլոր տեսակներով՝ հաստ, չղկած, մամած, բարակ և փալլուն. մագաղաթի օրինակների սակաւութեան պատճառն ալն է, որ հալերէն հին ձեռագիրները չկան, իսկ Թ—րդ դարից սկսած թուղթը գործածութեան մէջ մտնելով, վտար առ փ.

քըր դուրս է մղել թանգ և հագուագիւտ մագաղաթը. Գաղաքակրթական տեսակէտից առանձին նշանակութիւն կունենար, եթէ հարց տրուէր և որոշուէր թէ հընում հալերը ըրտեղից, Բնչ գործարաններից են թուղթ ձեռք ձեռքել. արդեօք երկրի մէջ, Հալաստանի որևէ մասում վործ եղել է թղթի գործարան *) հիմնելու թէ ոչ. Հ. Կ. Սիպիլեանը իւր ընտիր աշխատութեան մէջ սԴասադրութիւն Ռուբինան դրամոց ի Նըկատի առնելով դրամների արուեստը, մետաղի ընտրութիւնը կամ վատութիւնը, տարածման շրջափայլերը, որոշել է հալ վաճառականութեան շարժումն հնում, օտարների ազդեցութեան չափը դրամների կտրելու արուեստի վերայ, նոյնը և կարծում ենք աւելի մեծ չափով կարելի էր ձեռագրերից քաղել. բայց Հ. Տաշեանը ալց խնդիրը չի շօշափել, որովհետև դրա համար անհրաժեշտ կը լինէր մեր հարեան ազդերը՝ ձեռագրերն էլ ուսումնասիրել: Դրա վտարէն նա մի առ մի թուում է գրիչների, գրելու տեղերի, ծաղկողների ածունները (էջ Ժ—ԺԴ), որից տեղում ենք, որ գրողների ամենամեծ տոկոսը կրօնատուներ են. շատ քիչ են աշխարհական գրիչներ, թէև հարց է արդեօք Հալաստան, Խաչատուր, Աւետիս և ալն, որ չու-

*) Յայտնի է միայն, որ երջանկալիշատակ Սիմէօն կաթողիկոսը 1776 թ. Էջմիածնում թղթի գործարան հիմնեց, բայց գծախտաբար շարունակող չունեցաւ:

*) Տես էջ ԺԸ—ԻԳ ցուցակը:

նին հոգեորական տիտղոսներ, աշխարհականներ են եղել: Ձեռագրերի մեծագույն մասը՝ մանաւանդ հին օրինակները գրուած է բուն Հայաստանում, զլիակարագէտ վանքերում: Իսկ քաղաքներից լաճախ վիշուտ են Ամիթ, Անի, Պոլիս: շատ վանքերի անուններ պահուած են և լատինում են միայն վիշատակարաններից: Հետագրքեր է գիւղական երէցների գործակցութիւնը: նրանք աւելի շատ են գրել, քան վանականները: Ինչ համեմատութիւն ներկայի և անցեալի: այժմ քանի գիւղական քահանայ կը գտնենք, որ իւր Աւետարանը ուղիղ կարդալ իմանար, ուր մնաց թէ գրականութեամբ էլ պարագլի:

Մազկոզներ, կազմողներ և ստացողներ քիչ անգամ են վիշուտ:

Յուցակագրութեան մեծ օգուտը լինելու է ի միջի այլոց հակական մանրանկարչութեան զանազան ատիճանները ուսումնասիրել: Իսկ դրա հետ կապուած է կազմերի կաշիւայ ծածկոցի վրայ սեղմուած ամենատարբեր զարդերի փոփոխման տարբեր աստիճանները որոշել, որոնցից շատերը այնքան նման են խաչաձև գերեզմանաքարերի քանդակներին, հին եկեղեցիներին պատերի վրայ փորագրած ձևերին՝ որ հետևապէս սերտ կապ ունին հավիական ճարտարապետութեան զարգացման հետ:

Յուցակի գործածութիւնը զիւրացնելու համար գրուած են մի քանի համեմատական տախտակներ (էջ ԺԷ—ԿԻ) և վերջից լատուկ

անունների և նիւթերի մանրամասն ցանկ (էջ 1149—1164): Տախտակները սրանք են՝ հին և նոր թուակարգութեան, ձեռագրերի և նիւթոց հնութեան, ընդհանուր նկարագրութեան (համեմատական մեծութիւն, գիր, ժամանակ, գրիչ, տէր և բովանդակութիւն) և նիւթերի, բաղկացած 12 զլիւրից: Ամենակարևորն է լատուկ անունների և նիւթերի ցանկը: զա չէ ներկայացնում անունների և էջերի պարզ վիշտակութիւն, այլ անուան մօտ դրուած է նրա ինչ լինելը, նրա գրած գործը և սրա մասին տեղեկութիւններ: Մալր ցուցակում արդէն տուել են մատենագիտական ցուցմունքներ, թերին լրացրել են ցանկի մէջ, օրինակ. «Փաւստոս Բուզանդ, պատմագիր 74, 291. տպ. Կ. Պոլիս 1830, վենետիկ 1832 և ամփոփոխ 1890. հրատ. Գ. Պատկանեան, Պետերբուրգ 1883, զգ. ՅարգիսնուՅիւն J. B. Emine. Faustus de Byzance նոս աշխատէս որ եթէ մէկը կամենայ՝ կը գտնէ Փաւստոսի մասին ամենաճիշտ ամփոփ մատենագիտական գիտելիքներ Տաշեանի ցանկի մէջ: Ը. Տաշեանը ասում է, որ դժուար է եղել ցանկացած լրութեան հասնել, բայց մենք հաւատացած ենք, որ նա հնարաւորութեան չափով հասել է այդ լրութեան: Մենք մասնագիտորէն պարագլի ենք Սոկրատի եկեղեցական պատմութեամբ և Բարաղամի ու Յովսափի վէպով: Թէ մէկի և թէ միւրի համար զլիակար աղբիւրները վիշուտ են: Այդ ձևով կազմած ցանկը անհրա-

ժեշտ ձեռնարկ է ծառայելու իւրաքանչիւր հաւազէտ մասնագէտի համար:

Լուսատիպ և վիճատիպ 7 տախտակներում գտնոււմ ենք ա. 20 զանազան տեսակ զրութիւններ. երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր և ալին, բ. Ազաթանգեղոսի կրկնագիրից մի երես, գ. ա—ֆ մի մի օրինակ փառագրեր, դ. Աւետարանից վերցրած ոսկեալ և փալուս գոններով նկարած խորան, կիսախորան, լուսանցիկադարդեր, և. երեք մանրանկար (խոսակցութիւն Յիսուսի ընդ օրինականի. վերջին ընթրիք և վերջին դատաստան), զ. Աւետարանի երկու կանոններ և է. կազմերի երեսներ (երեք կաշեալ և մի արծաթեալ): Ընտրած օրինակներից երեւում է, որ Վիեննայի մատենադարանում չափնի և գեղեցիկ ծաղկած ձեռագրեր չկան. այդ կողմից ինչքան հարուստ է Էջմիածնի մատենադարանը:

Բուն ցուցակի մասին, որ բազկացած է 1043 էջից, միայն այս կարող ենք ասել, որ չափազանց ընդարձակ և մանրամասն է, որով շատ է մեծացել զրքի ծաւալը, հետեապէս և գինը: Նկարագրութեան մէջ անընդհատ կրկնուող բառերը անփոփոխ էր կրճատ գրել. օրինակ թիւ 1 և 2 նոյն ճառընտիր ձեռագիրն է 2-ի բաժանուած. բաւական կը լինէր երկրորդի միայն թղթերի թուի, կազմի և հանգամանքի մասին նոր բան ասել. միւս բոլոր մասերը առաջին թուի կրկնութիւնն է. կամ

Յալսմաւուրքի բովանդակութեան մէջ իւրաքանչիւր նոր հատուած սկսոււմ է սովորաբար «Յալսմաւուր վկայաբանութեան սրբոն». միթէ նպատակաւարմար չէր լինիլ գրել, օրինակ. «Յ. աւ. վկբ. ս.», որով մի էջում 10 տողի փոխարէն բաւական էր 2-ը: Եթէ այդ ընդարձակութեամբ կազմելու լինինք Էջմիածնի 4000 ձեռագրերի ցուցակը (այս թիւը կարող է առնուազը հազարով աւելանալ, եթէ կաթողիկոսի հրամանով զանազան վանքերի և եկեղեցիների դարակներում փյաջող, կորչող օրինակները Էջմիածին հաւաքուին), որոնց մէջ տասնեակ ճառընտիրներ կան, այն ժամանակ 2. Տաշեանի աշխատութեան պէս 6—8 հատոր պիտի ստացուէր: Բայց Մըխիթարեան միաբանութիւնը ծախքից լետ չէ կանգնել, ոչ մի միջոց չի խնայել գործը փառաւոր վերջացնելու, որոշած լինելով իրենց Արքայօր՝ 2. Արսէն Այտընեան արքեպիսկոպոսի փինամեալ քահանայութեան շօրելեանին նուիրելու այդ ծանրակշիւ աշխատութիւնը, որին երախտապարտ է միաբանութիւնը նրա՝ վանքին մատուցած վարչական և գիտնական գործունէութեան համար: Գրքի հրատարակութեան նպատակ են Վիեննայի կալսերական Ակադեմիան և 85 բաժանորդներ: Տպագրութեան կողմից, ուրիշ անգամ էլ առիթ ենք ունեցել չափանելու, Վիեննայի Մխիթարեան տպարանը տպագրական վերջին խօսքի անփոփոխ իրադրոծող է:

Մեքրոպ վարդապետ

ՍԵՊՇԵՒ ԵՐԶԱՆԵԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Клинообразныя надписи Закавказья, Исслѣдованіе М. В. Никольскаго. (Материалы по археологии Кавказа собранные экспедиціями Имп. Моск. Арх. Общ. Выпускъ V. Москва 1896).

Նիկիտակու այս աշխատութիւնը մեծ քառածալ դիրքով (in 4°) ունի 133 էջ և 23 ամենաընտիր լուսատիպ տախտակ, Մեծ և Փոքր Մասիսի, Արաքսի հովտի, Արագած լեռան և արձանագրութիւնների ու նրանց գիւտի տեղերի պատկերներով, միակն VI տախտակը ներկայացնում է Խորասրատի մի բարձրաքանդակ (Basrelief), Սարգոնի պատերազմը և լաղթութիւնը Ուրարտուի թագաւորի դէմ, իսկ վերջի տախտակը՝ արձանագրութիւնների տեղերի քարտեզը: Պրոֆեսոր Նիկիտակին միակն է ուսուցիչականների մէջ, որ սկսել է ուսումնասիրել Հայաստանում զրտնուած սեպածի արձանագրութիւնները և վերջի տարիներում հրատարակել է երկու դեղեցիկ ուսումնասիրութիւն՝ «Клинообразныя надписи ванскихъ царей открытыя въ предѣлахъ Россіи»*) և այս աշխատութիւնը: Սրա մէջ լաւաջարանից լետոյ (էջ 1—13) աւանձին 11 գլուխներով՝ ժամա-

նակագրական և տեղագրական կարգով հրատարակուած են Ռուսահայաստանում գտնուած բոլոր արձանագրութիւնները, լուսատիպ պատկերներով, տպագրած տրանսկրիպցիայով, ուսերէն թարգմանութիւններով և բացատրութիւններով (commentar). գրքի վերջում էջ 152—133 նկարագրուած է մի թանգազին քար՝ դեմնա (gemma — թանգազին քար փորագրութիւնով) սեպագրով, որի գրութիւնը սակաւն անվերծանելի է:

1827 թ. դերմանացի Շուլցէ դիտնականը ֆրանսիական կառավարութեան լանձնարարութեամբ դնաց Հայաստան ուսումնասիրելու և Վանայ միջնաբերդի ցից ցից ժաւռերի վրայ առաջին անգամ գտաւ սեպագրեր, որոնք դանազանում էին սպարսկական և ասորական սեպագրերից և որոնք կոչուեցին հալկական սեպագրեր: Մի անգամ ուշադիր եղած՝ շատ ճանապարհորդներ սկսեցին նետամուտ լինել և գտան բազմաթիւ արձանագրութիւններ Հայաստանի որոշ մասերում՝ Վանի, Որմիայ լճի, Հին Բալազիտի, Կրդրումի մօտ, Շիրակում, Կարսում, Արարատեան դաշտի և Սևանայ լճի մօտ, դրանց թողել է մի ժողովուրդ, որ Գրիտոտոսից 7—800 տարի առաջ ապրում և իշխում էր լիշեալ տեղերում և ապա անհաւասար մաքառման մէջ մտնելով հարեան զօրեղ ազգերի հետ, ընկճուել է և ընդ միշտ պատմական ասպարիզից հեռացել. մասամբ ունշանալով, մասամբ միանալով

*) Труды Восточной Комиссіи, т. I. вып. 3 стр. 375—453. Այս գործը ամբողջովին թարգմանել է Եղիշէ վարդապետ Մուրադեանը «Արարատ»-ի 1893 թ.

երկրին տիրապետող նոր ազգերի հետ, Զանազան ժամանակներում ալ և ալ անձինքներից գտնուած արձանագրութիւնների թիւը հարիւրի է հասնում, որից 87 հրատարակութեան միջոցաւ գիտութեան մատչելի է դարձած, իսկ մնացածները կամ չեն հրատարակուած կամ հրատարակութիւնները անբաւարար են համարուած:

Ի՞նչ ազդ էր ալ ժողովուրդը, ինչ լեզուով են դրուած արձանագրութիւնները. ահա հարցեր, որ մինչև օրս չեն լուծուած, չնայած որ արձանագրութիւնները Ֆրանսիայի Գիւարդ (Guard) և անգլիացի Սալս (Syse) գիտնականների ջանքով կարդացուած են. առանց լեզուն իմանալու կարելի է դարձել կարդալ, որովհետև հակական սեպագրերը ծագած են ասորաբարբելականից, իսկ նրանց կարդալը և ուղիղ կերպով թարգմանելը շատ վաղուց է չաջողուել: Ոմանք սեպագրերի լեզուն համարել են հին հայերէն (Մորզման), ուրիշները վրացերէն (Սալս), վերջերս էջմիածնի միաբան Գալուստ Տէր-Մկրտչեանը փորձեց Ուտիացոց լեզուի մէջ գտնել սեպագրերի լեզուի մնացորդը. բայց չաջող չէ և ոչ մի կարծիք և դժբաղաբար մինչև օրս գտնուած միակ երկլեզուան (bilinguis) արձանագրութիւնը աղճատուած և անընթեռնելի է: Գիտութեան համար սեպագրերից ստացած միակ հաստատարողունքն է՝ երկրի, տեղերի, քաղաքների և իշխող թագաւորների

լատուկ անունների ճանաչելը և մի քանի բառերի մօտաւորական թարգմանութիւնը. այսքանն էլ առ անժամ կարելի է բաւական համարել, որովհետև դրանով կարելի է դարձել՝ հիմնուելով ասորական աղբիւրների գրաւոր պահուած արձանագրութիւնների և աշխարհագրական տեղեկութիւնների վրայ, վերատեսչո՞ծել ալ պատմական ազգի մոռացուած անցեալը, ճանաչել նրա թագաւորներին, իրենց չաջողներով և նրանց աշխարհակալական և քաղաքակրթական գործերը: Գիտութիւնը շարունակ հետամուտ է ամեն գաղտնիքի բանալին գտնել, ամեն հարցի ուղիղ պատասխանը տալ, չուանք որ մի օր անպատճառ կը լուծուին Հալաստանի սեպագրերի չլուծուած խընդիրներն ևս. և այնքան աւելի հաստատ է այս լուսը, քանի որ վերջերս սեպագրերով պարագողների թիւը աւելացել է և 90 թուականից ի վեր՝ համեմատաբար կարճ ժամանակում գտնուել է 30-ից աւելի արձանագրութիւն, թէև Տաճկաստանում և Պարսկաստանում երկիրը հետազոտելը կապուած է մեծ դժուարութիւնների, նոյն իսկ անձնական վտանգների հետ:

Ինչպէս ասացինք, Նիկոլսկին կանգ է առնում միայն Ռուսահալատանում գտնուած արձանագրութիւնների վրայ, որոնք պատկանում են անհամեմատ ուշ ժամանակի՝ 8—7 դար Ք. առաջ. մինչդեռ Վանինը աւելի հին են: Նա ժամանակի տարբերութիւնը ալ-

պէս է բացատրում. Սեպագիր թող նող ժողովուրդը արձանագրութիւնների մէջ իրան՝ երկրի անունով Բիաւալի ժողովուրդ (Biauna—Վան) է կոչում, ասորական աղբիւրները Նրան Ուրարտու են (Urartu) անուանում. Աղ կրկնակի կոչումը կը հասկացուի, եթէ ընդունենք որ Ուրարտուի թագաւորութիւնը սկիզբը իշխելիս է եղել Արարատեան դաշտում և այդ անունով լատինի դարձել ասորիներին, լատի թողնելով հիւսիսը արշաւել է դէպի հարաւ, Վանը ամբարցրել և մալրաքաղաք դարձրել. այդ ժամանակուանից ընդունել է տեղի անունը և զորձ անել նախկին անուան փոխարէն, մինչդեռ Ասորիները շարունակել են հին անուան զորձութիւնը: Տարբեր է Բելք և Վեման գերմանացի գիտնականների կարծիքը, որոնք այդ աղբիւն թաւղիին է, թաւղի անունն են տալիս (Chaldi—Chaldini) ասելով որ այդպէս են կոչուել երկրի գլխաւոր աստուած թաւղի, թաւղիաւի անունով: Ուրեմն անորոշ է մնում թէ թաւղի, Բիաւալ և Ուրարտու անուններից որն է այդ աղբիւն սեպական եղել, կամ գուցէ կարելի լինի ընդունել, որ երեքն էլ գործածական էին նոյն ժողովրդի զանազան գաւառներում և գրանցից մէկը կամ միւսն էր լատինի հարեւան աղբիւն:

Ուրարտուի ժողովուրդը Վանի շրջակայքում հաստատուելով Քր. 1500 տարի ասաջ, մինչև 7-րդ

դարը շարունակ պատերազմում էր ասորիներին դէմ, երբեմն լաղթելով երբեմն ընկճուելով. ասորական արձանագրութիւնները լի են այդ պատերազմների լիշատակութիւնով: Երկու աղբիւրից իւրաքանչիւրը կամենում է աշխարհի տիրապետութեան գերիշխանութիւնը ձեռք ձգել: 7-րդ դարում Քր. առ. Ուրարտուի Ռուսա կամ Ուռուսա և Ասորոց Սարգոն թագաւորները երկար կռուեցին. լաղթանակեց Սարգոնը. մահու և կեանքի կռիւ էր այդ. ընկճուած ժողովուրդը կրեց լաղթուողի բոլոր ծանրութիւնը. այնուհետև անհետացաւ պատմական ասպարիզից՝ անզոր գտնուելով դիմադրելու արեւմտքից արշաւող հայկական աղբիւն, որը երկրին տիրապետուց լիտով քիչ քիչ միացրեց իւր հետ իւր համացեղակից Ուրարտեան աղբը, ընդունելով նրա աւանդութիւնները որ բերան բերան հաղորդուելով մտել են խորենացու պատմութեան մէջ:

Ուրարտուի կամ աւելի ուղիղ Բիանալի թագաւորները հարաւում պատերազմելով, մտածել էին նորից ձեռք ձգել հիւսիսային երկիրները և հասնել մինչև Կովկասեան մեծ շղթան. նրանց այդ ջանքերի կենդանի վկաններն են այն արձանագրութիւնները, որ գտնուել են Արարատեան դաշտում և շրջակայ գաւառներում և որ պատկանում են Վանի վերջի թագաւորներին. Ինչպէս Եուլցը առաջինը եղաւ Վանալ արձանագրութիւնների գտ-

նորը, մեզ մօտ ալլ սսպարիզում մեծ և անգնահատելի ծառայութիւն ունի մատուցած Ս. Էջմիածնի աւագագոյն միաբան Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանը, 1862 թուին նա գտաւ առաջի սեպագիր արձանագրութիւնը Արմաւիրի մօտ և այնուհետև մինչև օրս՝ ուղիղ 35 տարի անզաղրում հետամուտ է և չաջողել է միշտ նորանոր զիւտեր անել: Բարձր Սրբազանը անտեղեակ որևէ եւրոպական լեզուի և մասնագիտութեան, բաւականացել է գտած օրինակները տպել «Արարատ»-ի մէջ՝ զնելով զիւտի վերաբերեալ անհրաժեշտ տեղեկութիւնները: Մոսկուայի հնագիտական ընկերութիւնը գնահատելով նրա ծառայութիւնը նրան պատու անդամ է ընտրել և պրոֆ. Նիկոլսկին իւր վերև վրած առաջի գործը գրելիս, հիմնուել է զբլ խաւորապէս Մեսրոպ սրբազանի բաւական ստուար անտիպ ձեռագրից, որի մէջ հեղինակը դասաւորած ունի իւր գտած արձանագրութիւնները հարկաւոր բացատրութիւններով: Սրբեմնակի պատահական կամ մասնագէտ ճանապարհորդներ զիտել հետազօտել էին արձանագրութիւնների տեղերը, օր. 1891 թ. Արարատեան դաշտը այցելեց գերմանացի Բեւլըը, որ Գանձակի մօտ գտնուող Գիտաբեկ պղ. դնձահանքում մի քանի տարի ին ժիւների պաշտօն ունէր և ազատ ժամանակները գործ էր զրել Ռ. Վիրխովի լորդորանօք և թելագրութեամբ՝ հանքի մերձակալքում գա-

նուած բազմաթիւ նախապատմական բլրակները (Хургань) և զերեզմանները պեղել և հետաքրքիր զիւտեր անել, նա Ռուսաստանից անցաւ Պարսկաստան և ապա Տաճկաստան և կարողացաւ կարճ ժամանակում 22 արձանագրութիւններ գտնել կամ արդէն չալտնիւները աւելի լաւ արտանկարել: Բեւլքի ունեցած մեծ չաջողութիւնը շատերին սթափեցրեց, երկու տարի անց 1893 թ. Մոսկուայի կալսերական հնագիտական ընկերութիւնը կովկաս ուղարկեց իւր երկու չալտնի անդամներին՝ պրոֆ. Նիկոլսկուն և խվանովսկուն, չալտնայէս բեռնագրերը և Հալաստանի հնութիւնները ուսումնասիրելու խվանովսկին քնտոյ երկու անգամ կրկնեց իւր ճանապարհորդութիւնը 1894 և 1896 թուերին և հրատարակել է գեղեցիկ հաշիւներ (ОТЧЕТЫ). իսկ Նիկոլսկին բաւականացաւ միայն մի անգամով և ուսումնասիրեց բացառապէս արձանագրութիւնները և նրանց զիւտի տեղերը, որի արդիւնքն է ներկայի գեղեցիկ աշխատութիւնը:

Այժմ անցնենք բուն արձանագրութիւններին. նրանք Ռուսաստանում գտնուած են 11 տեղ, թուով 26 են:

ա. Դաշբուռուն՝ Իզդիրի մօտ Արաքսի աջ ափին, երեք օրինակ, մէկը մնում է զիւտի տեղը ժալուի վրայ, երկրորդը Իզդիրի գաւառագետի մօտ է, իսկ երրորդը կորել է և աժմ մնացել է Մեսրոպ սրբազանի արտագրութիւնը:

բ. Արմաւիր՝ գտնուած են 14 օրինակ (Նիկոլսկին 12 օր.). 12 պահուած են էջմիածնի թանգարանում, մէկը մնում է ժալուի վրայ, Արաքսի ափին Կարակալա կոչուած տեղում. 13-ը մի աղիւս է 1896 թ. գտնուած. Նիկոլսկին փորձել է ցուց տալ, որ մինչև այժմ լայտնի միակ աղիւս օրինակը կեղծած է և դրա համար էլ չէ մտցրել իւր գրքի մէջ. Մենք Բեռլին Լեմանին ուղարկեցինք 12 ող և աղ աղիւսակի (13-րդ) էստամպաները և նկարագրութիւնը. Լեմանը մեր չօդուածը տպել էր (Zeitschrift für Ethnologie 1896 Heft IV) և ապացուցել որ Նիկոլսկու կարծիքը աղիւսի մասին սխալ է, 14-րդը նոր 1896 է գտնուել դարձեալ Մեսրոպ սրբազանի ջանքով.

գ. Գ ու լ ի ջ ա՝ Երբակ գաւառի գիւղ է, Արագածի հիւսիս-արեւմտեան ստորոտում, միայն 1 օրինակ, որ մնում է գիւտի տեղը, ժալուի վրայ.

դ. Ղ ա ն լ ի ջ ա՝ Կարսի գիւղերից, Ալէքսանդրապոլից 8 վերստ հեռու Արփաչալ գետի եղերքին, միայն մի օրինակ, որ մնում է սկզբնական ժալուի վրայ իւր տեղը.

ե. Ս ա բ ի կ ա մ ի շ՝ Կարսի գիւղերից. միայն մի օրինակ. գտել է Աղ. Նրիցեանը, պահուած է Քիֆլիսի Կովկասեան թանգարանում. մի քանի տեղից կտորտուած է և վնասուած:

զ. Ղ ա ն լ ի-թ ա փ ա՝ Երևանից դէպի հիւսիս մի վերստ հեռու, միայն մի օրինակ, գտել է Իվանով-

սկին, տարուել է Մոսկուս հնագիտական թանգարանը.

է. է ի լ ա Ր՝ Երևանից հիւսիս խճուղու առաջին կայարանն է 15 վերստ հեռու. միայն մի օրինակ, որ մնում է սկզբնական տեղը, ժալուի վրայ.

ը. Օ Ր զ ա ք լ ու՝ Սեանալ լճի հիւսիս-արեւմտեան ափին, միայն մի օրինակ, մնում է սկզբնական տեղը.

թ. Ա թ ա մ ի ա ն՝ Սեանալ լճի հարաւ-արեւմտեան ափին, միայն մի օրինակ, պահուած է Քիֆլիսի Կովկասեան թանգարանում.

ժ. Ջ ա խ ա լ ու՝ Սեանալ լճի հարաւային կամ հարաւ-արեւելեան ափին, միայն մի օրինակ, մնում է սկզբնական տեղում, ժալուի վրայ.

ժա. Ք ե ս լ ա ն ի-Ք ի ո լ ա ն ի՝ Սեանալ լճի հարաւային ափին, մի դուրս ցցուած բարձր ժալուի վրայ, որի ստորոտը լուսացուած է ջրից և երկար ժամանակ չէին կարողացել էստամպած առնել կամ լուսանկարով վերցնել. մեծ դժուարութիւններէից լետոյ Իվանովսկուն լաջողուել է էստամպած հանել.

Ահա այն բոլոր սեպագրերը, որոնք շնորհիւ Մեսրոպ սրբազանի ջանքերին (նա գտել է 26-ից 22 օրինակ) գտնուել են զանազան ժամանակներում և այժմ Նիկոլսկու գրքի ընտիր հրատարակութեան միջոցով բոլորը ի միասին հաւաքած՝ սեպականութիւն են դարձել գիտութեան. Գրանցից մէկը կորած է, մէկը Եզգիրի գաւառապետի մօտ է և պիտի բերուի

էջմիածին, 13-ը պահուած են էջմիածնում, երկուսը կովկասեան թանգարանում, մէկը Մոսկուայի թանգարանում, ութը մնում են իրենց գտնուած տեղերում:

Արձանագրութիւնները մեծ մասի մէջ Ուրարտեան թագաւորները լեռագալ սերունդներին պատմում են իրենց արշաւանքների և գրաւած քաղաքների ու երկրների մասին, Այդ արշաւանքների սկիզբը գնում է Վանի իշպուհինի թագաւորի որդի Մենուան. նա որոշած լինելով Արարատեան դաշտը մասնել, փոխանակ Հին-Քալազիտի վրայով կարճ ճանապարհ ընարելու, Բարձր Հայքի՝ Էրզրումի ճանապարհով է առաջ խաղացել. Հին-Քալազեաը հնումն էլ ամրացրած էր և Արարատի փեշերի վրայ գտնուած մի ուրիշ բերդի հետ, որի աւերակները երևացել են վերջերս, փակում էր Վանից հիւսիս գալու կարճ ճանապարհը: Մենուաաը ճանապարհին Դելիբաբա գիւղի մօտ Արաքսի աջ ափին, Էրզրումի հիւսիս արևելեան մասում մի արձանագրութիւն է թողել, որով բացատրում է նրա արշաւանքի ուղղութիւնը: Մենուաաը գրաւում է Արաքսի աջ ափերը, հասնում է րի դուռ և խիճի (Eriduachini կամ Eriduachi) երկիրը (Դաշրուտունի շրջակայքը) և վերցնելով նրա գլխաւոր քաղաքը՝ Լիխիունի (Lichjunini), փոխում է անունը և իւր անունով Մենուախիլի (Menuachinili) կոչում—Մենուալի բնակա-

վալը: Սա իւր գրաւած քաղաքը զարդարում է շինութիւններով և մեհեաններով, որոնց մասին լրջատակութիւն կալ Դաշրուտունում գրտնուած արձանագրութիւններում: Նիկոլսկու կարծիքով Դաշրուտուն գիւղը շինած է Մենուախիլիի քաղաքի տեղը:

Հօր սկսածը շարունակեց նրա որդի Արգիշտի առաջինը (Argishti I), որ Վանի ամենահռչակաւոր թագաւորներից մէկն էր: Սա անցաւ Արաքսի ձախ ափը և այնտեղ ընտրեց իւր համար գործունէութեան Նոր կենդրոն՝ պատմական Արմաւրի տեղը: Լիխուինի քաղաքը սաղմագիտական տեսակէտից չունէր այն լարմարութիւնը, ինչպէս Արմաւրի ըլուրը, որ գտնուելով Արաքսի ձախ ափին հաղորդակցութեան մեծ լարմարութիւններ ունէր հիւսիսային բարձրութիւնների հետ, որոնց գերաւելը Ուրարտուի թագաւորների կէտ նպատակն էր: Արդեօք Արմաւրը իբրև քաղաք գոյութիւն ունէր, թէ Արգիշտին նրա հիմքը դրեց, զեռ չալտնի չէ, որովհետև նրա շրջակայքում գտնուած բազմաթիւ (14 հատ) արձանագրութիւնները չեն վկայում գրաւման մասին, այլ վերաբերում են շինութիւնների կառուցման և ջրանցքների անցկացնելուն, որ ձեռնարկել են Արգիշտի Ա, Սարգուրի Բ. և Ռուսա Բ. Քր. 8—7 դար առաջ: Արձանագրութիւնների մէջ քաղաքը Արգիշտու անունով կոչում է Արգիշ-

տիխինիլի (Argishtchinili), ինչպէս Մենուեախինիլի. միայն հարց է թէ արդեօք հին Արգիշտիխինիլին և Արմաւիրը նոյն տեղն են գտնուել և արդեօք ուղիղ է ժողովրդի մէջ պահուած աւանդութիւնը, որի համաձայն Արաքսից մօտ 4, իսկ Էջմիածնից դէպի արևմտահրևսիս մօտ 25 վերստ հեռուն գտնուող դաշտի մէջ առանձնակի բարձրացող բլրակը Արմաւիր է կոչուած: 1880 թուին գրաֆ Ուլարովը իւր ամուսնու հետ լատկապէս Մ. Էմինի առաջարկութեամբ պեղումներ կատարեց ակբլրի վրայ և նրա շուրջը, նա գրտաւ միայն փրկչական չորրորդ դարու մնացորդներ, մինչդեռ սպասում էր Ուրարտեան ժամանակի լի շատակարաններ գտնել, ակբլատաւ ձառով նա եղրակացրեց, որ այտեղ չէ եղել Արմաւիրը, այլ ուրիշ տեղ: Նրբ Ուլարովը պեղում կատարեց, չալտնի էին Արմաւրից միայն երեք արձանագրութիւն, մինչդեռ ակսօր դրանց թիւը 14-ի է հասնում, բոլորն էլ նմանատեսակ քարերից շինած (մէկը աղիւս է) և դրա համար Նիկոլսկին չէ վարանում ընդունելու, որ ակբլրի վրայ է եղել Արգիշտիխինիլին, խորհնացու Արմաւիրը: Սա Հակագեան շրջանում էլ մալրաքաղաք է ծառայել, մինչև Փրկչ. 79 տարի առաջ Նրուանդը վախենալով Արտաշէսից, նոր աւելի ամուր քաղաք շինեց իւր համար՝ Նրուանդակերտ անունով, Ախուրեան գետի Արաքսի խառնարանի

մօտ: Արշակունեաց ժամանակ Արմաւիրը հեթանոսական գլխաւոր սրբավայր էր, նոյն էր Ուրարտեան շրջանում, Սեպագրերի մէջ Արմաւրում լիշոււմ են երկու գըլխաւոր, խալդէի և Արտիւնի (արեգակի աստուած) աստուածներին մեհանները:

Արմաւրից մի քանի ճանապարհներ են տանում դէպի հրևսիս. Ա. Կողբի վրայով դէպի Սարիղամիշ, Բարձր Հալք և Շիրակ, երկրորդ՝ Ապարանի վրայով դարձեալ դէպի Շիրակ և երրորդ՝ Նրեանի վրայով դէպի Սեանի լիճը: Արգիշտին, ինչպէս ցոյց են տալիս սեպագրերը, երեքից էլ օգտուել է, ամեն ուղղութեամբ առաջ խաղալով և երկիրներ գրաւելով: Սարիղամիշի արձանագրութեան մէջ Արգիշտին պատմում է, որ Էտիլունի երկրում տիրել է մի քանի քաղաքներ, որոնց մէկի անունը Ախուրեանն է (Achuriani) մի անուն, որ պահուել է Արաքսի ձախ կողմից թափուող Ախուրեան չալտնի գետի վրայ: Հնում ակբ գետի կարսչալ կամ կարսալ ջուր ճիւղն էր Ախուրեան կոչոււմ, որ փոխ է առել իւր անունը Ուրարտեան ժամանակուս Ախուրեանի քաղաքից:

Մի անգամ կարսի բարձրավանդակը հասնելուց լետու, Արգիշտին կարող էր մտնել Շիրակայ պտղաբեր և խիտ բնակուած լեռնադաշտը, բայց դրանով հեռացած կը լինէր իւր կենտրոնից՝ Արմաւրից, որտեղից Ապարանի վրայով աւելի հեշտ և շուտ կարելի էր Շի-

րակ հասնել։ Այդ գծի վրայ մինչև օրս արձանագրութիւն չէ գտնուել, բայց դրա փոխարէն Նիկոլային Բիրականի մօտ եղող բազմաթիւ արհեստական ալերբը և Ամպերդի բերդը Ուրարտեան շրջանի մնացորդներ է համարում։ Ապարանը իբրև ցուրտ երկիր խիտ բնակուած չէր, Արդիշտին կարիք չունէր առանձին դժուար կռիւներ մղելու ալք երկրին տիրելու համար, նա հնչտութեամբ անցաւ Ապարանով և հասաւ Շիրակ, որտեղ գտնուել են երկու արձանագրութիւն, մէկը Արագածի հիւսիսային փեշերից հոսող կարկաչան վտակի վրայ՝ Գուլիշան գիւղի մօտ, որ ինչպէս ակժամ, արնպէս և՛ հնում, բազմամարդ գիւղերի կենդրոն և նշանաւոր քաղաք է եղել, միւսը Ղանլիճա գիւղի մօտ, Արիաշալի կամ Ախտուրեանի հովտում Ալէքսանդրապօլից 8 վերստ դէպի հիւսիս։ Այսպիսով Արդիշտին իւր տիրապետութեան տակ է ձգել ամբողջ Արագած լեռքը իւր շրջակայ պրոտորներ երկրներով։

Արդիշտին ալքքանով չքաւակաւաացաւ։ Արմաւրից լայն ճանապարհ էր բացում դէպի Երեանի բարձունքը. պտղաբերութեամբ հուշակաւոր Երեանը չէր կարող չգրաւել պատերազմասէր թագաւորին։ Երեան քաղաքից մի վերստ դէպի հիւսիս ընկած Ղանլի-Քափալի արձանագրութիւնը վկայում է, որ Արդիշտին հնչտութեամբ չկարողացաւ առնել Էրիալնի (Eriani — Երեան անունը համարեա

անփոփոխ պահուած է մինչև օրս) երկիրը. բայց փոքր ժողովուրդներն իրանց աննշան թագաւորներով երկար չէին կարող դիմադրել Բիալնալի անեղ թագաւորին. նա գրաւեց միմեանց լեռնից Էրիալնի, Ուլուանի (Uluani — այժմ կոչում է Էլլար) և Կիեխունի (Kiechuni — Գեղամալ երկիր, այժմ արձանագրութեան գիւտի տեղը կոչում է Օրդաքլու) երկրները, արնեղ մահը սահման դրաւ նրա արշաւանքներին։ Արդիշտու լաջորդները՝ Սարգուրի II և Ռուսա I Երեանից Գառնու վրայով մտնում են Սեանալ լճի հարաւային երկրները՝ Արկուկունի (Arkukuni, Urtachini) Ուրտախինի (Ջախալուի արձանագրութիւնը) և օրիշ շատ երկրներ։ Ռուսա I-ը Քեօլանի — Քիւլանի հուշակաւոր արձանագրութեան մէջ թուում է իւր գրաւած 23 երկրներին անունները, որոնցից նշանաւորներն են Սուիա (Suinia) այժմուայ և պատմական Սիւնիքը, Ալդամանունի (Aidamanuini), այժմ Ատեաման և Գուրիալնի (Guriaini) այժմ Գառնի, միւս 20 անունները չեն նորնացրած համապատասխան երկրների հետ։ Այս ալն Ռուսան էր, որ հիւսիսային ժողովուրդների օգնութեամբ երկար ժամանակ կռուեց Ասորոց Սարգոն թագաւորի հետ և լաղթուելով՝ պատճառ դարձաւ իւր երկրի կորստեան։

Նիկոլայու արձանագրութիւնների միջոցով վերահաստատուած պատմութեան էական կէտերը պս-

տեղ առաջ բերելով, տեսնում ենք թէ ինչպէս գիտնականների անխոնջ ջանքով վերականգնանում են հարիւրաւոր դարեր մեզնից առաջ ապրող, մեր աշխարհի վիճակը իրենց ձեռին ունեցող անձնաւորութիւնները և այդ անձանց կատարած գործերը: Բայց միթէ միայն գիտութիւնն է կարողանում մթութեան քողը հեռացնել, միթէ ազգի լիոջութեան ժողովըրդական աւանդութեան մէջ երկար ժամանակ ինչպէս անշունչ քարերի վրայ, անջինջ չեն պահուել տեղերի անուշները, չին հերոսների գործերը: Ահա այդ աւանդութիւններից է, որ Խորենացին իւր Ա. գրքի ԺԲ. գլխում պատմում է, թէ Հայկի որդի Արմենակը իւր եղբայր Մանաւաղին թողցնելով անալ ծով մտաւ: (Սա Ուրարտուի Մենուաս կամ Մենուասէ թագաւորն է, Արգիշտի հայրը), ինքը գնաց մի լեռան վրայ բնակութիւն հաստատեց, որ իւր անունով կոչեց Արագած, իսկ շրջակայ երկիրը՝ Արագածոտըն: (Բայց այդ անունը լեռը և շրջակայքը ստացել են տիրապետող Ուրարտեան Արգիշտի թագաւորից): Արմենակի որդի Արամալիսը շինում է Արմալիք քաղաքը (Argishtichinili), նրա թոռներից Գեղամը Գնում է Սեանայ (Suinia) լճի մտ հաստատուում, իսկ Փառոսի և Յոլակի համար Արարատի ստորոտում, Արաքսի աջ ափում շինում են սերկուս տունս), որոնք համապատասխան են Գայքուռունի և Արարատի ստորոտում

եղող բերդերի անբակներին, Այս հանգամանքները ի նկատի առնելով Նիկոլսկին վերջացնում է իւր աշխատութիւնը այսպէս. սչակական առասպելը Արաքսի հովտի տիրապետութեան մասին հալ նահապետների ձեռքով իսկապէս Ուրարտեան արշաւանքների լիոջութիւններ են: Այդ առասպելական արշաւարքների ընթացքը միանգամայն համապատասխան է Մենուալի, Արգիշտի, Սարդարի II և Ռուսա I թագաւորների պատերազմների ընթացքին:

Այնպէս հայերը երկար դարեր անկորուստ պահել են Ուրարտեան երկրի նախկին դանազան վարերի սկզբնական անունները, եթէ պահպանել են իրենց երկրի նախկին տիրապետողների գործերի լիշատակութիւնը, միթէ պահած չեն լինի նրանց լեզուի հետքերը. և արդեօք ուղիղ չէր լինիլ դառնալ նորից Մորմանի ընտրած ճանապարհին և մինչև այժմ Ուրարտեան չպարզուած լեզուն բացատրել հազրէնով: Իմ կարծիքով այդպիսի մի գործ է Լեոն Մսերեանի Pili—պիլի բառի բացատրութիւնը, որ առաջ է գալիս սեպագրերի մէջ, Լեման և Բեւք գիտնականները ՚ի նկատի առնելով, որ այդ բառը գործ է ածուած ջրանցքների վրայ գտնուած սեպագրերում, թարգմանում են՝ ջրբանցք—kanal, Մսերեանը համեմատական լեզուագիտութեան միջոցով նոյն եզրակացութեան է հասնում, օգտուելով հայկական դա-

ւառաքարբառներից. բայց այս հարցի լուծումը թողնենք մասնագէտներին:

Նիկիոլակին դիտնականի շատուկ լրջութեամբ և բարեխղճութեամբ է վերաբերուել իւր ընտրած գործին. նա չէ խնայել ոչ ժամանակ և ոչ աշխատանք ըստ կարելոյն կատարեալ անելու իւր աշխատութիւնը. նա անսովոր մեր երկրի՝ մանաւանդ Արարատեան դաշտի սարսափելի ամառուան եղանա-

կին, անձամբ ուսումնասիրել է երկրի տեղեկագրութիւնը, հետազօտել պատերազմական ճանապարհների ուղղութիւնը և գեղեցիկ և պարզ ոճով նկարագրելով այդ բոլորը, մի տեսակ կենդանութիւն է տուել նորև իսկ սեպագրերի ուսումնասիրութեան չոր ու ցամաք նիւթին: Նրա զուտ ուսումնական գիրքը կարգացում է իբրև մի գեղեցիկ նկարագրութիւն:

Մեսրոպ վարդապետ

